

« Կրնի, չիլնի մի մարդ: Կս մարդը ունենում աս էրկու աղայ. — մինը պատկուած՝ մէկելը չէ: Չատիկ իրա օրը, էգ պատկուած տղի կնիկը մարդի հեննայ էթում աս հէրանց գեղը. ընդէ մի քանի օր մնում: Չատիկը որ անց աս կենում՝ էս աղայ աղպէրը վեր աս կենում գալի՝ հարսին բերի: Աղպէրն ասում աս — գու կնկանս վէ կալ գնա՝ ես էլ հրէս եղեւներից գալիս եմ: Կս աղայ աղպէրն աս. հարսին նիլցնում աս ձին՝ ինքն էլ աղաք ընկնում, գալի: Գալիս են գալիս՝ շատն ու քիչն Աստօճ գիտայ՝ մի զուլալ աղբրի ռաստ են գալի: Կս աղէն ասում աս — հարսի, կանց էս աղբրումը մի պուճուր լեղանամ՝ էլ էգ էթանք: Ձին կանցնացնում աս, շորերը հանում՝ լեղանում: Արգիան որ էր՝ էն գհէցը աղպէրը գալիս աս տենում՝ իրա աղպէրը լեղացել աս՝ հրէն շորերն աս հագնում: Մտքովը ուրիշ բան աս անց կենում: գալիս աս թա րը հանում՝ աղպօրը վրա քշում, որ սրպանի: Նա նրան աս տալի, նա նրան՝ էրկու աղպէր տալիս են իրար գլուխ թլուցնում: Խեղճ կնիկը մնում աս գլխի վրէն մնորած. չի իմանում ի՞նչ աճի. չի իմանում ո՞րն աս իրա տէքօր ջամդաքը՝ ո՞րը մարգինը: Ա, եր աս ունում մարդի գլուխը՝ տէքօր ջամդաքի վրա աս գնում՝ տէքօր գլուխը՝ մարդի ջամդաքի վրա: Նստում աս ընդէ Աստուն էնքամ աղօթք անում, լաց ընում՝ որ Աստօճ լսում աս որա աղօթքը — էս էրկուն էլ ֆոգի աս տալի՝ սաղացնում: Էրկու աղպէր հմի էլի կուլ, զալմաղալ են անում. մինն ասում աս՝ էս իմ կնիկն աս. մէկէն ասում աս՝ չէ իմ կնիկն աս: Թագաւորն ապրած կենայ, կնիկը հմի ո՞րին կհասնի, » Թագաւորն ասում աս.

— Հալբաթ որ, մարդի գլուխը ո՞ր ջամդաքի վրա էլ աս՝ նրան կըհասնի: Աննայ թագաւորի նաղիր, վէզրին աս հարցնում.

— Նաղիր, վէզիր. կնիկը ո՞րին կհասնի:

— Հալբաթ որ մարդի գլուխը ո՞ր ջամդաքի վրա աս՝ նրան կըհասնի:

Թագաւորի աղջիկը էլ չի կարում իրան պահի. ընդիան ձէն աս տալի.

— Ա՛յ ձեր գատառտանը քանդուի. խի՞ կնիկը էն ջամդաքին կըհասնի, ո՞ր ջամդաքի վրա որ մարդի գլուխն աս. հաղիր էն ջամդաքին կհասնի՝ որ ջամդաքի վրա որ տէքօր գլուխն աս: Ա՛նչ աս. նենք, որ գլուխը մարդին չի. — սաղ ջամդաքը հօ՞ մարդին աս:

— Թէ որ էն կնիկը նրան կհասնի ասում աս արաքը. բնա գու էլ ինձ կհասնես:

Թագաւորը, նրա նազիրը, վէղիրը քօմմայ մնացին սառած, թէ ո՞նց խօսացրեց աղջկանը:

— Էս մի հետը խօսացրիր, ասեց թագաւորը. մնաց էրկու հեռ. թէ որ էս էրկու հեռն էլ խօսացրիր՝ հօ ի՞նչ որ խօսուացել էմ' կտամ. թէ չէ՝ իմաց կ'աց գլուխդ կ'իւրրայ:

— Ա՛աւ, թագաւորն ապրած կենայ. թո՛ղ ըտենց ըլնի, ասում ա արարը:

Արարն էթում ա տուն. կերակրից, զագից էփում՝ հազիր տնում, որ աղպէրը գայ՝ հաց ուտեն: Աղպէրը որ գալիս ա տուն՝ արարը ո՛ր ասես նրան բան չի ասում, թէ գնացել էր թագաւորի աղջկանը խօսացնելու:

Առաւօտը որ լիսանում ա՝ աղպէրն էթում ա իրա բանին՝ արարն էլ վեր ա կենում գուզ էթում թագաւորի խնամաքարի վրա նստում: Թագաւորը էն սհաթը դուռ ա գալի արարին կանչում, տանում աղջկայ օթախը:

Արարը օթախի մէջը դէս ա մօն գալի, դէն ա մօն գալի՝ տնում ա էն ժանգոտ շամագանը չկայ. դու մի սախ թագաւորի աղջիկն ա զաստի վեր ունիլ տուէ, որ արարը գայ՝ հեննէն խօսալու էլ զագ չգտնի: Էթում ա օթախները մօն գալի՝ մի ժանգոտ, քնձսթ թուր ա գտնում. բերում գնում աղաքը՝ հեննէն խօսում:

— Բարո՛յ, ժանգոտ թուր աղպէր. էս քանի տարի ա իրար չենք տեսէ. ըսկի չես ասում իմ արար աղպէրն էս ո՞ւր ա. չի էրեւում:

— Բարին արեւդ, արար աղպէր: Ի՞նչ անեմ, ամեն մարդ իրա դարդովն ա մոլորէ՝ ես էլ իմ թարգույր: — Աղաք ես ինչ թափուր լաւ թուր ի. թագաւորը ինձ վրէն էր կապում՝ էթում կռիւ. կռւումը ով գիտայ քանի գլուխ մի դրրբումն ի թըռցընում: Հոմայ հմի թագաւորը էլ ինձ մօիկ չի անում. — ժանգոտե՛լ եմ՝ էլէ դուադայ զագ. ըսկի երեսիս թամաշ անող չկայ:

— Բան չկայ, թուր աղպէր. Աստօծ ողորմած ա: Դու էն աս. հէքաթից, մասալից չես գիտայ, ասես անկաջ գնենք՝ օր մի նացնենք:

— Չէ, արար աղպէր. ես զագ չեմ գիտայ. թէ էգ թափուր հունար ունեն՝ ասա՛. հազիր պարտալ եմ, անկաջ գնեմ:

Ա՛աւ, կասեմ. հոմայ պտի լաւ անկաջ գնես, հա՛:

— Աստ, անկաջ կդնեմ: Արարն ասում ա.

« Ընում ա չիլնում մի խառադ, մի գերձիկ՝ մրն էլ մի տէր-տէր: Արանք իրեքով աղպէր են դառնում՝ վէ կենում էթում դարբութիւն՝ աշխատանքի: Եթում են էթում, շատն ու քիչն Աստօժ գիտայ՝ մի մէշի դրաղի մութը վրա ա հասնում: Ըստէ վեր են գալի սր գշերը մնան՝ առաւօտը էլ եդ էթան իրանց ճամփէն: Չունքի հենները բօլ փող ին վէ կալէ՝ ասում են — էկէք գշերը դօրէգօր դարաւուլ քաշենք, որ մեզ հարամի, զադ չբմտանայ:

« — Լա՛ւ, ասում ա խառադը, էդ շատ լաւ կըլնի: Ուզո՞ւմ էք, հէնց իրիկնէց՝ ես դարաւուլ կքաշեմ, եննայ մի քիչ կ կենամ՝ գերձիկն կըզարթացնեմ՝ ես կընեմ: Լիսագէմին՝ նա էլ թող տէրտէրին վէ կացնի:

« Իրադնով էլ ռաղի են ըլնում ու աղաք խառադն ա դարաւուլ քաշում: Համայ ըս էլ պտի ասեմ, որ էս խառադը շատ գլուխ ուստայ ա ըլնում, որ սաղ աշխարքումը սրա հատը ուստայ չէր ըլնի:

« Էս մեք խառադն ա, ուրաքը մէջքն ա խորում՝ դարաւուլ քաշում, ընկերտիքն էլ՝ քնում են: Եդ գշեր էլ սատանական էն թալուր ցուրտ էր, էն թալուր ցուրտ՝ որ իմ միս կտրողին ռատտ չգայ: Խեղճ խառադը ցրտու զընգըռ — զընգըռ դողում էր, չէր իմանում ինչ անի: Վերջը ասեց — արի մի իշկիլ սարքեմ, եննայ պառկեմ քնեմ. ո՞վ կիմանայ թէ ես քնել եմ: Եթում ա մեշէն. լաւ լաւ չամի փէտեր կտրտում՝ բերում էն թալուր մի փէտէ իսան շինում, որ գշերը մարդ տենար՝ կասէր. էն ինչ մարդ ա ընդէ կաննած — էնքամ մարդի նման էր, Ըսենց շինում ա, գիք կաննացնում՝ ինքը պառկում քնում: Քնում ա, քունն առնում՝ եննայ գշերուայ մի վախտ դարթնում ա, գերձիկի կողքին բռթում:

« — Դերձիկ աղպէր, վէ կաց, քո՛ւ դօրն ա. դարաւուլ քաշա՛: Ասում ա՝ ինքը քնում:

« Դերձիկը վեր ա կենում՝ տենում ինչ — մի մարդ ընդէ գիք կաննած ա. ո՞նչ ժաժ ա գալի, ո՞նչ էլ. ինքն իրան ասում ա — արի որ սա գող ըլնի՞, Ել ձէն, ծպտուն չի հանում. կամաց կամաց մօտանում ա, թուրը քաշում՝ տալի վէ գցում: Թրի ծէրովը գէս, գէն ա բռթում՝ տենում ա որ զօրթմանայ իսան չի՝

փէտից ա շինած: Նոր գլխի ա ընկնում, որ էս խառագի սատանութիւնը կրինի: Կնքն իրան ասում ա. — քա ես էլ չկարենամ խառագին մի ֆանդ գայ: — Էթում ա մեշէն. ծառի լէն տերեւներ պոկոտում, բերում էս փէտէ մարդի հմար մի ձեռք շոր ա կտրում՝ կարում, հազցնում: Էս հեա որ տենայիր, խանից չէիր ջոկի. կասէիր — զորթմանց որ մարդ ա: Լխագէմին վեր ա կենում տէտէրին բռթում:

« — Տէրտէր, տէրտէր, վէ կաց. դօրը քունն ա. մի քիչ էլ ես աչքս կալցնեմ:

« Տէրտէրը վեր ա կենում տենում ինչ — մի երկէն մարդ, շորերը սիրուն հագին՝ ընդէ կաննած: Թուքը, մուքը կալցում ա. մօտանում ա ձէն տալի — ո՞վ ես. ո՞վ ես. ո՞վ ես. — ձէն չի տալի: Տանում ա բերում որ մի դրը չի տալի՝ երեսը հարքի վրա փռկվում ա: վեր ընկնում: Նոր վարաւուրդ ա անում, որ փետէ մարդ ա. նոր որ սիրտը մի քիչ հանգարտում ա: Իմանում ա որ խառագի ու գերձկի սատանութիւնն ա: — Ա՛յ հարայ, ասում ա. նրանք էնքամ էլան՝ էս թալուր խան շինեցին. քա ես էլ չկարենամ սրան ֆոգի տայ, որ էսքամ սուրբ տէրտէր եմ:

« Էս մեր տէրտէրն ա. էն ցուրտ, դիմաթին չօքում ա Աստուհ աղօթք անում, աղօթք անում. էնքամ աղօթք ա անում, որ Աստօծ լսում ա նրա ձէնը՝ էս փետէ մարդին ֆոգի ա տալի: Բէնում ա զորթմանանց մարդ, հենները խօտում, զրից անում — մախլասի՝ թամամ մարդ:

« Պուարի տես հմի էս իրեքով իրար հեննայ զալմաղալ են գցում. — խառագն ասում ա՝ էս մարդը ինձ կհասնի. չուհի ես գնացի մէշիցը փէա կարեցի, բերի շինեցի: Գերձկին ասում ա — Ձէ, ինձ կհասնի: չուհի ես նրա հմար շոր կարեցի՝ հազցրի. թէ չէ հմի ցրտու գլխ էր չորացէ: Տէրտէրն էլ ասում ա. — Հաղիր ինձ կհասնի. ես որ չչօքէի՝ Աստուհ աղօթք չանէի, նրան ո՞վ ֆոգի կտար. դարգակ փետէ մարդը որ ֆոգի չուհենար՝ ընչի՞ էր պէտք: Թագաւորն ապրած կենայ. հմի էն մարդը ո՞րին կհասնի: »

— Հալբաթ որ խառագին. որ քոմմից աղաք՝ նա միտք արեց, բերեց փէտից մարդ շինեց:

— Նաղիր, վէղիր. ո՞ւմ կհասնի:

— Հալբաթ որ գերձկին. որ նրա հմար շորեր կարեց՝ ցրտից պրծացրեց:

Թագաւորի աղջկայ սիրտը էլ չի գիմանում. էն դժիցը ձէն ա տալի. — Տօ՛ ձեր գատաստանը քանդուի, սրգիան նրանց կհասնի. տէրտէրը որ չընէր, էն փեռէ մարդին ո՛վ ֆոգի տալ կրտար — հաղիւր տէրտէրին կհասնի՞:

— Թէ որ նա տէրտէրին կհասնի, ասում ա արարը. բնա գու էլ ինձ կհասնես:

Թագաւորը, նրա նազիր, վէղիրը էլի մնում են զարմացած, թէ ո՞նց արարը էս էրկու հեռ աղջկանը խօսացրեց:

— Մնաց մի հեռ, ասում ա թագաւորը. թէ խօսացրիր, հօ խօսացրիր՝ աղջիկս քուէն ա. թէ չէ՝ գլուխդ պաի ֆըրրայ:

— Լաւ, թագաւորն ասրած կենայ, ասում ա արարը. թո՛ղ բռնեց ընի:

Արարը գալիս ա տուն, աղաօր հմար կերակուր հազրում. Հացի վախտը աղաւերը գալիս ա՝ հաց են ուտում: Համայ դեռ բնչանք հա՛լի՝ նրան զաղ չի ասում:

Առաւօտը աղաւերը որ էթում ա իրա բանին՝ արարն էլ վեր ա կենում գալի թագաւորի խնամարարի վրա նստում:

Թագաւորը գուռ ա գալի արարին կանչում՝ տանում աղջկայ օթախը:

Արարը օթախի մէջը դէսն ա մտիկ տալի, դէնն ա մտիկ տալի՝ տենում օթախը լա՛ի գարտակ ա. ըսկի զադ չկայ, որ բերի հեննէն խօսայ էթում ա թագաւորի աղջկայ քարգայը բերում՝ դնում աղաքը՝ հեննէն զրկց անսւմ.

— Ախար բարո՛վ, քարգայ աղաւեր. բժի չի բանես, մի քիչ էլ գինջացի մեղք ես:

— Է՛հ, ինչ գինջանամ, արար աղաւեր. տարէն տասնէրկու՝ ամիս իմ բան ու փէշակը հա՛ էս ա, հա՛ էս. հօ նոր չի:

— Լաւ. բնա մի հէքաթ, բան չէ՞ս գիտայ. ասես, անկաջ գնենք:

— Չէ, արար աղաւեր. ես ի՞նչ հէքաթ իմանամ. թէ գու գիտաս՝ ասա:

— Լաւ, ուզում ես ասեմ. համայ պաի լաւ անկաջ գնես, հա՛:

— Ասա՛, անկաջ կգնեմ. ասա՛ տե՛նանք: Արարն ասում ա.

«Ընում ա չիւնում՝ մի թագաւոր. էս թագաւորը մի հուրի մալաք, սիրուն աղջիկ ա ունենում: Էս աղջկանը՝ համ թագաւորի նազրի տղէն ա սիրած ընում, համ վէղրի տղէն. համ էլ

հրա սինօթապետի տղէն: Հմի թագաւորը չի իմանում՝ ո՞րին տայ: Համայ ըս էլ պտի ասեմ, որ հրա աղջկանը քօմմքից աղաք՝ վէզրի տղէն էր սիրէ: Թագաւորն ապրած կենայ. քու խելքով աղջիկը ո՞րին կհասնի:

— Հալբաթ որ թագաւորի սինօթապետի տղին. ասում ա թագաւորը:

— Նաղիր, վէզիր. աղջիկը ո՞ւմ կհասնի:

— Հալբաթ որ թագաւորի սինօթապետի տղին:

Թագաւորի աղջիկը էս հետ էլ չի գիմանում. ընդիան ձէն ա տալի:

— Տօ՛ ձեր գառաստանը քանդուի. աղջիկը խի՞ պտի սինօթապետի տղին հասնի. հաղիր վէզրի տղին կհասնի, որ քօմմքից աղաք իրար հեննայ խօսք ու զրից են ունեցէ՛ իրար սիրէ՞:

— Ար նա հրան կհասնի, ասում ա արաքը. բնս դու էլ ինձ կհասնես:

Թագաւորը էլ ինչ պտի ասէր, որ աղջկանը չտար. ըս էլ իրեք հետ խօսացրեց. բերում ա աղջիկը տալի արաքին՝ վրէն էլ օխտը զաթրաբեռ ոսկի:

Արաքը աղջիկը վեր ա ունում՝ գալի տուն. աղպօր հմար կերակուր էփում, հաղիր անում: Աղպէրը որ գալիս ա տուն, աղջկանը տենում՝ մնում ա զարմացած: Հարցնում ա — արաք աղպէր, էս աղջիկը որդիան ա: Նոր արաքը ասեց — բն չես տա՞ր ըսենց, ըսենց, ըսենց բան — ո՞նց որ ես ձեզ նաղլ արի՛ արաքն էլ հրան նաղլ ա անում: Արաքն ասում ա.

— Թագաւորի ցեղն ապրած կենայ. բօլ ա ինչքամ աշխատանք արինք. արի ըստիան վէ կենանք էթանք: Փառք Աստու. հմի՞ էլ հօ՛ քեասիր չենք. — թագաւորի տաւած օխտը զաթրաբեռ ոսկին սաղ ըլնի:

Էրկսով իրանց զագ — մագերը հաւաքում են՝ ճամփայ ընկնում: Գալիս են գալիս շատն ու քիչն Աստօճ գիտայ՝ հասնում են էն աղբրի կուշտը, որդէ աղաք աղպէր ին դառէ: Ըստէ բեռները վեր են դնում նստում հաց ուտում: Հաց են ուտում՝ պրծնում, արաքն ասում ա.

— Է՛, թագաւորի ցեղ. դէ՛ արի մեր աշխատանքը փայ անենք.

— ո՞նց որ ըստէ աղպերացանք՝ ըսենց էլ հմի բաժանուենք:

— Ա՛յ ջանըմ, գեօղըմ, խի՛ բաժանուենք. ասում ա թագա-

ւորի տղէն. հաղիր աղպէր ենք, էլի՞. կէթանք իրար հեննայ էլ մի տեղ կկենանք:

— Չէ՛, ասում ա արարը. պտի բաժանուենք, որ պտի բաժանուենք:

Ի՛նչքամ փող ին աշխատէ՛ բերում ա արարը հալսղ կէս անում. մնում ա աղջիկը: Թուրը քաշում ա՛ որ աղջկանն էլ կէս անի:

— Ա՛յ աղպէր, ասում ա թագաւորի տղէն. էլ աղջկանը խի ես կէս անում. էգ աղջիկը քունն ա ու քունը. գրանից ես փայ չեմ ուզում, էլի՞:

— Չէ՛ որ չէ՛. ասում ա արարը. պտի էս աղջկանն էլ կէս անեմ. — թէ փայ ենք անում՝ հալալ փայ անենք:

Թուրը քաշում ա որ տայ՝ էն սհաթը աղջկայ բերնիցը մի եքայ վիշապ ա դուս գալի, ընդէ վեր ընկնում: Արարը աղջկանը էլ ձեռը չի տալի. հասնում ա վիշապին սըպանում, կտոր կտոր անում:

— Ի՛նձ ճանա՞նչում ես, ասում ա արարը. թագաւորի ցեղ. ես էն Ասկէ Ձուկն եմ, որ չղըմշեցիր մորթես, որ ինչ ա հօրդ աչքերը լաւանայ՝ էլ եգ գցեցիր ծովը: Իմ խաթէր՝ հէրգ քեզ սուրգին արեց, տանիցը դուս արեց. էս որ իմացայ՝ ես էլ ծովի միջիցը դուս եկայ՝ էլայ արար, որ քու արած լաւութիւնի տակիցը դուս գամ— ձեռիցս եկած լաւութիւնն էլ՝ ես քեզ անեմ: Հրէս սա. էսքամ փողն էլ քեզ, էս աղջիկն էլ քեզ. ես էս ա էթում եմ էլ եգ ծովը. Աստօծ շնորհաւոր անի. Աստօծ էրկսիդ մի բարձի ծերացնի: Իմ փարիցն էլ քեզ մի հատ կրտամ. տա՛ր հօրդ աչքերը քոս՝ էն սհաթը կրբացուի:

Արարը էն սհաթը ընում ա՝ էլի աղաքուայ Ասկէ Ձուկը. Իրա փարիցը մի հատ պոկում ա՛ տալի թագաւորի տղին, մնա՛ա բարով անում հեննէն՝ էթում ընկնում էլ եգ ծովը:

Թագաւորի տղէն բեռները կապում ա՝ ընկնում ճամփայ՝ դալա իրանց երկիրը: Գալիս ա գալի՝ շատն ու քիչն Աստօծ գիտայ, հասնում ա հօր քաղաքը: Տենում ա որ դեռ հլա էն Լօղմայ հէքիմը հօր աչքերի վրա չարչարվում ա: Էն սհաթը հանում ա Ասկէ Ձկան փարէն, քսում հօր աչքերին թէ չէ՛ ալբիալը բացվում ա:

Թագաւորը իրա թախտիցը վեր ա գալի՝ աղին նստացնում:

Բերում ա աղջկանն էլ տղի վրա պսակում՝ օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում:

Նրանք հասան իրանց մուրաղին, դուք էլ հասնէք ձեր մուրաղին:

Զոպողի հայը՝ Զոպողին հայաւ ա.

Մի հարուստ մարդ առաւօտը դուռ ա գալի էթում բազար՝ տան հմար զագ, մագ առնելու: Էս մարդը ջէբումը ունենում ա մի ոսկի, մըն էլ մի կոպէկանոց: Ճամիրին սրան մի աղքատ ա աւաստ գալի՝ ողորմութիւն ուզում: Էս մարդը ձեռք ջէբն ա տանում, որ մի կոպէկանոցը հանի տայ աղքատին՝ ոսկին ա ձեռն ընկնում. ու չունքի վռագում էր՝ մըկ էլ մօրիկ չի անում — տալիս ա՝ անց կենում:

Բազարումը զագ առնելիս՝ ձեռք տանում ա ջէբը որ ոսկին հանի խորդայ անի, տենում ա ոսկի չկայ — մէնակ մի կոպէկանոց ա: Նոր գլխի ա ընկնում, որ աղքատին ա տուէ: Էն սը-հաթը գալիս ա էն աղքատին գտնում, աղանչաք անում.

—Ա՛յ բարի, ասում ա. էն վախտը քեզ փող տալիս չըշկրկեցի՝ մի կոպէկանոցի տեղակ՝ ոսկի տուի. չիլնի եգ տաս:

Աղքատը երգում, կրակն ա ընկնում: Թէ չէ՝ իրան ոսկի չի տուէ. հրէս ուզում ա գայ տենայ իրա փողերը: Հարուստն էլ բան չի ասում. զրազ ա քաշվում ու մի տեղ տափ կենում, որ տենայ, աղքատը որդի ա էթում՝ ինքն էլ եննուցն էթայ: Նրա բախտիցը՝ աղքատն էլ ջուխտ աչքով մայիֆ ա ընում:

Իրիկունը աղքատը ուրախ ուրախ էթում ա տուն. հարուստն էլ նրա եննուց: Աղքատը էթում ա էթում՝ մննում մի տուն — հարուստն էլ նրա եննուց ա մննում: Աղքատը տախտի տակիցը չորս բզուզ ա հանում՝ մէջները լիքը փող — որի մէջը սեփող, որինը սիպտակ, որինը մանէթանոց, որինն էլ՝ ոսկի. ու սաղ օրուայ հաւաքած փողերը իրանց տեղերն ա ածում, — սեփողը՝ սեփողի վրայ, սիպտակը՝ սիպտակի, մանէթանոցը՝ մանէթանոցի: Էն նոր բերած ոսկին էլ՝ ծրրընգալէն գցում ա ոսկրքանց վրէն.

(Եւրոպական)

Տ. Նաւասարէանց: